Հիմնելով վերոյիշեալ մտախոհութիւնների վրայ, Կարօյի եւ իր ընկերների նպատակը ինձ երեւում էր բոլորովին երեւակայական, եւ ես խիստ ափսոսում էի, որ նրանք ընկած էին այնպիսի անելանելի մոլորութեան մէջ...

Ես միայն չէի, որ այսպէս էի մտածում, բոլոր ժողովուրդը այսպէս էր մտածում, որովհետեւ նրանք նոյնպիսի տէր թոդիկների աշակերտներ էին, որպէս ես:

Եւ Կարօն աշխատում էր մի այսպիսի նախապաշարոած ժողովրդի բարօրութեան համար...

ԻԱ. ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

Արեգակն սկսել էր արդէն այրել. կէսօրոայ տօթից դժոարանում էր մարդի շնչառութիւնը: Բաժանելով Հասօից, ես գնում էի մի նեղ շաւիղով, որ տանում էր դէպի փոքրիկ վտակը ձորի մէջ. այնտեղ արծաթափայլ ջրի կանաչ ափերը հովանաւորում էին մի խումբ ծառեր, որոնք տարածել էին իրանց ստորը մետաքսի պէս փափուկ խոտերի վրայ: Ես շտապեցի այնտեղ փոքր-ինչ ազատ շունչ քաշել: Ծառերը նոիրական էին մի փոքրիկ մատուռի, որի կիսաւէր փլատակները դեռ վայելում էին իրանց սրբազնական յարգանքը բարեպաշտ ժողովրդից: Մատուռի մի քանի ողջ մնացած կամարները, որոնք ազատել էին ժամանակի մաշող ձեռքից, թաքնոել էին, միմեանց հետ խիտ փաթաթոած թուփերի եւ մացառների մէջ, իսկ նոիրական ծառերը բարձր տարածելով իրանց ազատ ճիւղերը, գրկել էին իրանց ծոցում այն հինաւուրց սրբարանը:

Ծառերից մի քանիսի ճիւղերի վրայ փաթաթոած էին գոյնզգոյն թելեր եւ շորերի կտորտանքներ: Տատս վաղուց մեկնել էր ինձ այսպիսի ծառերի նշանակութիւնը. նա ասում էր՝ «երբ սուրբ ծառի ճիւղին մարդ կապում է իր հագուստից մի կտոր, իր բոլոր ցաւերը անցնում են այն ծառի վրայ»: Իմ սիրտն էլ լի էր ցաւերով... ես էլ տանջւում էի տխուր եւ հոգեմաշ զգացմունքներով... չթեթեւացնե՞լ արդեօք այս անախորժ բեռը...: Ես դուրս քաշեցի իմ արխալուղի կալոածքից մի թել եւ դողդոջուն ձեռքերով կապեցի նոիրական ծառի ճիւղին:

— Այս բաւական չէ՛, — լսելի եղաւ մի ձայն:

Ես սոսկացի. տեսնում եմ՝ նոյն ծառի բունի ետեւ կծկոել է մի կին: Սատանան իր բոլոր հրէշաւոր այլանդակութեամբ չէր կարող այնքան զարհուրելի լինել, որպէս այն մռայլոտ կերպարանքը: